ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1417-Ա/2 **«18» հունիսի 2025 թ.**

«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2025» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման N 3 հավելվածով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգի» 14-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի 25.02.2025 թ. N 16-Ա/1 հրամանով ձևավորված հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 12-ի նիստի N 25RL-4 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2025» մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսավորման երաշխավորված գիտական նախագծերի ֆինանսավորումը սկսել պայմանագրերով նախատեսված ժամկետներում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
18 հունիս 2025 թ.
N 1417-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
«ՀԵՌԱՎԱՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2025»
ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Ղեկավար (ներ)	Համաղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆին. ծավալ (հազ. դրամ)
1.	25RL-1A040	Շահղուլյան Հենրիկ; Նուրբեկյան Լևոն	Խալատյան Վիգեն Հայկի	Վեկտոր-արժեք ազատ եզրերով խնդիրներ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	130000.0
2.	25RL-1C026	Մուկասյան Ալեքսանդր; Ժուկովսկիյ Մաքսիմ	Համբարձումյան Դավիթ Արսենի	Բարձր էնտրոպիական չկարգավորված մագնիսական նյութերի նախագծում և սինթեզ քաղցկեղի բջիջների հիպերթերմիայի համար	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	130000.0
3.	25RL-1D021	Սփերրի Ջոնաթհան Ջոն	Խաչատրյան Հասմիկ Նվերի	Կանաչ քիմիայի կիրառումը: Կայուն սինթեզի լուծման նպատակով հայկական լաբորատորիայի ստեղծումը	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ	130000.0
4.	25RL-1E009	Յոշիհիդե Սեկիմոտո; Իիզուկա Կոտարո	Փիլոյան Արտակ Սարգսի	Տարածական ուսումնասիրությունների և քաղաքային ինֆորմատիկայի կենտրոն	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	107000.0
5.	25RL-1F016	Ադամեկ Միքոլայ	Բարսեղյան Նելլի Էդիկի	Հայաստանում վայրի և աճեցվող ձկների հիվանդությունների ախտորոշում և կանխարգելում. ուղղված կենսաբազմազանության զարգացմանը, կայուն ձկնաբուծության և ակվակուլտուրայի ստեղծմանը	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	130000.0
6.	25RL-1F024	Բինդեր Հանս; Լյոֆֆլեր-Վիրց Հենրի	Նիկողոսյան Մարիյա Արմենի	Տարածական առանձին բջիջների - օմիկայից մինչև հաշվողական ճշգրիտ ուռուցքաբանություն՝ մետաստազների առաջացման և բուժման հանդեպ ռեզիստենտության մեխանիզմների բացահայտում պինդ ուռուցքների ժամանակ	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	130000.0

Հ/հ	Ծածկագիր	Ղեկավար (ներ)	Համաղեկավար	Նախագծի վերնագիր	Կազմակերպություն	Ֆին. ծավալ (հազ. դրամ)
7 .	25RL-1F030	Կո Մոչիզուկի	Ղռեջյան Տիգրան Լևոնի	Հայաստանի բույսերի և դրանց փոշոտողների բազմազանության և կոէվոլյուցիայի փոխհարաբերությունների բացահայտումը	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	129140.0
8 .	25RL-2F029	Հուսսաինովա Իրինա	Գրիգորյան Եվա Գերմանի	Ջերմային անալիզը էներգիայի կուտակիչներ հանդիսացող կապար չպարունակող պիեզոէլեկտրական կերամիկական նյութերի մշակման համատեքստում	ՀՀ ԳԱԱ «Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	107000.0
9 .	25RL-5D031	Իշխանյան Արմինե	Բալասանյան Սոնա Արմենի	Սոցիալական և ինստիտուցիոնալ փոփոխությունների հետազոտական լաբորատորիա	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	107000.0
10 .	25RL-6A008	Լուրյե Վադիմ	Հակոբյան Հայկ Երջանիկի	Արևելաքրիստոնեական հետազոտությունների լաբորատորիա	«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամ	129997.0
11 .	25RL-6A028	Կոնտին Բենեդետտա	Սուքիասյան Համո Կարենի	Այսրկովկասի XVIII–XX դարերի հայկական տպագրությունը Արևելք-Արևմուտք միջմշակութային խաչմերուկում (հրատարակչական աշխատանքներ, գրաքննություն, վաճառք–տարածում)	ՀՀ ԳԱԱ «Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ	124500.0
12 .	25RL-6A038	Սամվելյան Պոլլետ	Կնյազյան Հասմիկ Անդրանիկի	Ճգնաժամ և հիշողություն. թվանշային բանավոր պատմությունների լաբորատորիա	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ	130000.0